# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 086-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16-Ը ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Արենի համայնքի ավագանու 16-ը հուլիսի 2025 թվականի թիվ 9 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 16-ը հուլիսի 2025 թվականի թիվ 9 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. ՀՀ Վայոց Ձոր մարզի Արենի համայնքի բյուջեի կատարման վերահսկողության իրականացման մասին:

3. Արենի համայնքում տեղական տուրք և (կամ)վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը հաստատելու մասին

4. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու և Արենի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N41-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

5. Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի կիրառման կարգը և չափերը հաստատելու մասին:

6. Արենի համայնքի ավագանու 2017 թվականի N47-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

7. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

8.Արենի համայնքի Արենի բնակավայրի ենթակայության տակ գտնվող միաֆազ հոսանքի աբոնեմենտը ժամանակավոր օգտագործելու նպատակով Արենիի միջնակարգ դպրոցի կառուցապատող ընկերությանը հատկացնելու մասին:

9. Արենի համայնքի ավագանու 15 մարտի 2023 թվականի թիվ 020-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

10. Արենի համայնքի ավագանու 14.02.2023 թվականի «Արենի համայնքի 2023-2027 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 008-Ա որոշման հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու մասին:

11. Արենի համայնքի ավագանու 11.02.2025 թվականի «Արենի համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ) հաստատելու մասին»թիվ 014-Ա որոշման հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու մասին:

12. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից օտարելուն համաձայնություն տալու մասին:

13. Արենի համայնքի ղեկավարի 2025 թվականի բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին:

14. Արենի համայնքի ավագանու 15.01.2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

15. Արենի համայնքի մանկապարտեզներին արձակուրդ տրամադրելու մասին:

16. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող «ՄԻԿԱՐ 7» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

17. Արենիի համայնքապետարանի և ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի համագործակցությամբ իրականացվող «Դիմակայություն ի սկզբանե» ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի զարգացման ծրագրին որպես համաֆինանսավորում լրացուցիչ 7 800.000 ՀՀ դրամ գումար հատկացնելուն համաձայնություն տալու մասին:

18. Հրատապության հիմքով պայմանավորված Արենի համայնքի ջրաղբյուրների վրա էլեկտրոնային հաշվիչ տեղադրելու և էլեկտրոնային միասնական հարթակին միացնելու աշխատանքների իրականացման նպատակով գնումները մեկ անձից կատարելուն համաձայնություն տալու մասին:

19. Գերմանական միջազգային համագործակցության ընկերության՝ GIZ-ի կողմից կողմից Տեղական զարգացման հիմնադրամի (ՏԶՀ) շրջանակներում Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում և Արենի

համայնքի մանկապարտեզներում «Ներառական կրթության ապահովում» ծրագրերի իրականացման նպատակով արտաբյուջետային հաշիվներ բացելուն համաձայնություն տալու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 087-Ա

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Յայաստանի Յանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Յայաստանի Յանրապետության բյուջետային համակարգի մասին» Յայաստանի Յանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով Արենիի համայնքի ավագանու խմբակցությունների կողմից ներկայացված ավագանու անդամների թեկնածությունները. Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է ավագանու անդամների միջոցով կամ աուդիտորական մասնագիտացված կազմակերպության միջոցով տարին մեկ անգամ պարբերականությամբ:

2.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված վերահսկողությունն իրականացնող ավագանու անդամների ցանկը՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել համայնքի բյուջեի կատարման վերահսկողության հիմնական խնդիրները՝

ա) բյուջետային մուտքերի կանխատեսումների և բյուջետային ելքերի նախահաշիվները կազմելու հիմնավորվածության ստուգում,

բ) բյուջետային միջոցների, ներառյալ՝ վարկերի և ներգրավված այլ փոխառու միջոցների ծախսման օրինականության ստուգում,

գ) բյուջետային պարտավորությունների կատարման, հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման, հաշվապահական հաշվառման և հաշվետվության վիճակի գնահատում,

դ) բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության սահմանում,

ե) բյուջետային գործընթացի նկատմամբ օրենքով սահմանված այլ պահանջների կատարման ապահովում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր̀ի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 088-Լ

## ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով.

Արենի համայնքի ավագանին որոշում

1. Հաստատել Արենի համայնքում տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հավելված N 1
Արենի համայնքի ավագանու
2025 թվականի հունիսի - ի
N 088-Ն որոշման

# Կ Ա Ր Գ
# ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ

*1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության վայոց Ձորի մարզի Արենիի համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառման գրանցամատյանների վարման կարգը:*

*2. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումն իրականացվում է տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝ գրանցամատյան), որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների:*

*3. Գրանցամատյանները դասակարգվում են՝*

*1) տեղական տուրք վճարող անձանց հաշվառման գրանցամատյաններ*

*2) տեղական վճար վճարող անձանց հաշվառման գրանցամատյաններ:*

*4. Գրանցամատյանները վարվում են Արենիի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համապատասխան աշխատակցի կողմից:*

*5. Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:*

*6. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումը կարող է իրականացվել փաստաթղթային կամ էլեկտրոնային ձևով:*

*7. Փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները կարվում և կնքվում են աշխատակազմի կնիքով:*

*8. Գրանցամատյաններում առնվազն պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝*

*1) գրանցամատյանի վարման տարեթիվը,*

*2) տուրքի և (կամ) վճարի տեսակը,*

*3) տուրք և (կամ) վճար վճարողների գրանցման հերթական համարը,*

*4) համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տուրք և (կամ) վճար (լրացվում է առկայության դեպքում),*

*5) տուրքի և (կամ) վճարի չափը,*

*6) ժամանակահատվածը, որի համար վճարվել է տուրք և (կամ) վճար,*

*9. Գրանցամատյաններում ներառվում են նաև՝*

*ա. Ֆիզիկական անձի անունը, ազգանունը (տվյալ լինելու դեպքում՝ հայրանունը),*

*բ. անձը հաստատող փաստաթղթի տվյալները,*

*գ. իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, կազմակերպաիրավական տեսակը,*

*դ. գործունեության հասցեն,*

*ե. հարկ վճարողի հաշվառման համարը.*

*Աշխատակազմի քարտուղար՝* *Գ. Սիմոնյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 089-Լ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N41-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերության և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

Արենիի համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 23-ի «ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենիի համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին» N 41-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԷ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության
Վայոց Ձորի մարզի Արենի համայնքի
ավագանու 2025 թվականի հուլիսի 16-ի
թիվ 089-Լ որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն քաղաքաշինական կանոնադրությունը հիմք է հանդիսանում հետագայում գոտևորման նախագծի մշակման համար և կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.2. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

1.3. Համայնքի քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է Արենի խոշորացված համայնքի Ագարակաձոր, Աղավնաձոր, Արենի, Արփի, Գնիշիկ, Ելփին, Խաչիկ, Չիվա և Ռինդ բնակավայրերի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի, սույն կանոնադրության, ՀՀ քաղաքաշինության բնագավառի օրենսդրության, գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

## II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ

(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքն ընդգրկում է Ագարակաձոր, Աղավնաձոր, Արենի, Արփի, Գնիշիկ, Ելփին, Խաչիկ, Չիվա և Ռինդ բնակավայրերը:

-Արենի բնակավայրը գտնվում է Արփա գետի ստորին հոսանքի երկու կողմերում, զբաղեցնում է 4359.52 հա տարածք: Հայաստանի հնագույն բնակավայրերից է,որի մասին են փաստում 2008թվականին բնակավայրում հայտնաբերված գտածոները: Գյուղն ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն՝ աշխարհում հայտնի Նորավանքի եկեղեցական համալիրը, հին գյուղատեղին ,13-րդ դարում կառուցած սրբ.Աստվածածին եկեղեցին, 13-րդ դարում կառուցած եռակամար կամուրջը, խաչքարեր, ամրոցը, մ.թ.ա 2-րդ հազարամյակի կիկլոպյան ամրոց, բնական քարայրներ՝ Մագիլի, Թռչունների քարանձավները: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1090 մետր բարձրության վրա:



--Արփի գյուղը համայնքի ամենաերիտասարդ բնակավայրն է՝ հիմնադրվել է 1965 թվականին Գնիշիկ գյուղի տարհանման բազայի վրա: Գյուղը գտնվում է Արփա գետի աջ ափին, մարզկենտրոնից 8կմ արևմուտք: Գյուղի բարձրությունը ծովի մակարդակից 1100մ մետր է, կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ խիստ շոգ: Տեղումների քանակը տարեկան 250-350մմ է:



--Ագարակաձոր բնակավայրը գտնվում է Արփա գետի ձախ ափին: Կլիման բարեխառն է, տեղումների քանակը տարեկան 350-400 մմ է : Բնակավայրում պահպանվում են մշակութային հուշարձաններ՝ 13-րդ դարում Օրբելյան իշխանական տան կողմից կառուցված, 9-րդ դարի ամրոցի ավերակներ, 12-րդ դարի խաչքարեր, 17-րդ դարում կառուցած եկեղեցու ավերակներ և 17-րդ դարում կառուցած Սրբ.Հովհաննես մատուռը: Բնակավայրը հարուստ է տուֆի հանքավայրերով, հանքային ջրերի պաշարով -



--Աղավնաձոր բնակավայրը համայնքի հին բնակավայրերից է , վերաբնակեցվել է 1928թվականին Պարսկաստանից գաղթած հայ ընտանիքներով: Բնակավայրի վարչական տարածքը 5045 հա է, գտնվում է ծովի մակերևույթից 1400 մետր բարձրության վրա: Կլիման մեղմ է, տարեկան տեղումների քանակը 350-400մմ: Գյուղը հարուստ է պատմական հուշարձաններով՝ Ժամի տափ /Ուլգյուր/ հին գյուղատեղին, ճարտարապետ Մոմիկի կառուցած Սրբ.աստվածածին եկեղեցին, 13-րդ դար, 10-11-րդ դարերի թվագրված մահարձաններ, խաչքարեր, 13-րդ դարի կառույց <<Աղջկաբերդ>>ամրոցը, 14-րդ դարում կառուցած իջևանատունը, Մոմիկ ճարտարապետի գերեզմանը:



---Գնիշիկ բնակավայրը իր մեջ ընդգրկում է 2գյուղ՝ Գնիշիկ և Մոզրով: Բնակավայրի բարձրությունը ծովի մակարդակից 2060մետր է, կլիման ձմեռը տեղումնառատ է , մեղմ, ամառը՝ զով: Տարեկան տեղումների քանակը 350-400մմ է: Բնակավայրը սահմանամերձ է: Գիշիկ գյուղի վարչական տարածքից է սկիզբ առնում համանուն գետը: Բնակավայրը հարուստ է մշակութային հուշարձաններով ՝ խաչքարեր, խոյերի քանդակներ, պահպանվում է 13-րդ դարի եկեղեցու ավերակները




---Ելփին բնակավայրը համայնքի հնագույն բնակավայրերից է ,վերաբնակեցվել է 1928 թվականին պարսկական Սալմաստ գավառից եկած ներգաղթյալներով: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1545 մետր բարձրության վրա, կլիման մեղմ է, տարեկան տեղումների քանակը՝ 280-350 մմ:Բնակավայրի վարչական տարածքում են գտնվում հին գյուղատեղիներ, <<Թուխ Մանուկ>>սրբավայրը, հին



- Խաչիկը համայնքի սահմանամերձ բնակավայրերից է (երեք կողմից սահմանակից է Ադրբեջանի հետ ,սահմանը ձգվում է 27 կմ), որի վարչական սահմաններում է տեղակայված N զորամասը: Վարչական տարածքը 7303hա է, բարձրությունը ծովի մակարդակից 1850 մետր է, կլիման ձմռանը ցուրտ է, ամառը `զով, տարեկան տեղումների քանակը 350-400մմ է: Խաչիկ բնակավայրը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով՝ Քարակոփի Խոտակերանց վանքը, գյուղամիջի ժամը, ժամի Թիլ, Մեղրաքար , Ջրաղացների բերդերը, հին բնակատեղիներ, ձիթահանքի, 5-6 ջրաղացների ավերակներ:

Վարչական տարածքը 7303hա է, բարձրությունը ծովի մակարդակից 1850 մետր է, կլիման ձմռանը ցուրտ է, ամառը `զով, տարեկան տեղումների քանակը 350-400մմ է: Խաչիկ բնակավայրը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով՝ Քարակոփի Խոտակերանց վանքը, գյուղամիջի ժամը, ժամի Թիլ, Մեղրաքար , Ջրաղացների բերդերը, հին բնակատեղիներ, ձիթահանքի, 5-6 ջրաղացների



ավերակներ:

- Չիվա գյուղի պատմությունը սկիզբ է առնում հեթանոսական ժամանակներից: Չիվայի մասին հիշատակումներ կան Ստեփանոս Օրբելյանի <<Սյունիքի պատմություն>> աշխատության մեջ՝ 13-րդ դարի թվագրությամբ: Երբեմնի վանքապատկան գյուղը 1820-ական թվականներին վերաբնակեցվում է հայերով և այլազգիներով:1988 թվականից գյուղում ապրում են միայն հայեր: Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից 1116 մետր է, կլիման կիսաչորային , տեղումների քանակը



սարալանջ:

--Ռինդ գյուղը հիմնադրվել է 1800-ական թվականներին Շորգեցի Սիմոնի կողմից:
1967 թվականին, սողանքի պատճառով, տեղափոխվել է <<Թափ>> կոչվող հանդամաս: Բնակավայրն ունի մեղմ կլիմա, տարեկան տեղումների քանակը 350-400 մմ է: Գյուղի տարածքում պահպանվել են 12-13-րդ դարերի եկեղեցու մնացորդներ, մատուռներ, խաչքարեր: Ռինդ գյուղը համայնքի համեմատաբար բարեկարգ բնակավայրերից է և գրավիչ վայր զբոսաշրջության զարգացման համար , առավելևս



ագրոտուրիզմի զարգացման համար:

2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

1

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի տարածքում տեղակայված հուշարձանների ցուցակն ըստ բնակավայրերի բերված է ներքոնշյալ աղյուսակում:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ

| *Հու-շար-ձա-նի հա-* | *Հուշարձանի ենթահամարը (ենթահա-մարները)* | *Հուշարձանա-խումբը, հուշարձանը* | *Ժամա-նակը* | *Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն* | *Նշանա-կու-թյունը հանրա-պետա-* | Ծանոթա-գրություն |
|---|---|---|---|---|---|---|

| *րր* | | | | | | | *տեղա-կան* | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |

## Գնիշիկ գյուղ

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | ԳՅՈՒՂԱՏԵՂԻ ԳՆԻՇԻԿ | 9-20 դդ. | գյուղի ամ մասում | Տ | 1: Ենթակայու-թյամբ ներկայաց-ված է ևս 1 հուշարձան (1.3) |
| | 1.1 | | Գերեզմանոց | 9-20 դդ. | ամ մասում, տարածվում է գյուղ մտնող ճանապարհի 2 կողմերում, գյուղատեղիի ամ և հվ մասերում | Տ | 1.1: Ենթակայու-թյամբ ներկայաց-ված է 26 հուշարձան (1.1.1-1.1.26) |
| | 1.2 | | Եկեղեցի | 19 դ. | գյուղատեղիի կենտրոնում | Տ | 1.2: Ենթակայու-թյամբ ներկայաց-ված է 7 հուշարձան (1.2.1-1.2.7) |
| 2 | | | ԵԿԵՂԵՑԻ | 10 դ. | գյուղից 1 կմ հս-աե | Հ | 2 |
| 3 | | | ԵԿԵՂԵՑԻ | 18-19 դդ. | գյուղից 2 կմ հս | Տ | 3 |
| 4 | | | ԽԱՉՔԱՐ | 1289 թ. | գյուղից 1.5 կմ հվ-աե | Հ | 4 |

## Ագարակաձոր գյուղ

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | Խաչքար-Արցախյան 1-ին պատերազմում զոհվածների հիշատակին | | Մշակույթի տան դիմացի պուրակում | Տ | , |
| 2. | | | | Խաչքար- 2020թ.-ին Արցախյան պատերազմում զոհվածների հիշատակին | .2021թ | Մշակույթի տան դիմացի պուրակում | Տ | Կառուցվել է Ռուսաստանաբնակ համագյուղացիների կողմից |
| 3. | | | | Դաղալի կամուրջ | 13-րդ դար | Ագարակաձոր բնակավայր | Հ | |
| 4. | | | | Եկեղեցի Խարաբա | 1740թ. | Ագարակաձոր, գյուղատեղի Ծուղրիտ | Հ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մանում | | Բոլորաբերդ | | |
| 6. | | | | Եկեղեցի Ս.Աստվածածին | .17-րդ դարեր | Ազարակաձոր | Հ | |
| 7 | | | | Եկեղեցի | 13-14-րդ դարեր | Բերդի ձոր | Հ | |
| 8 | | | | Մատուռ | 1745թ. | | Հ | |

## Աղավնաձոր բնակավայր

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | Հուշաքար –Մուրադ Սարգսյանի անվան | 2007 | Գտնվում է բնակավայրի Դաղձի Ձոր հանդամասում /1-ին փողոցի վերջնամաս/ | Տ | Կառուցված է բարերար Սամվել Սարգսյանի կողմից |
| 2. | | | | Հայրենական պատերազմի հուշաղբյուր /Պետրոսյանների/ | 1960 –ական թվականների վերջին | Գտնվում է բնակավայրի 1-ին փողոցում | Տ | |
| 3. | | | | Հայրենական պատերազմի /Բաղալյանների/ և Արցախյան պատերազմին նվիրված հուշաքարեր / | 1960-ական թվականների վերջին և 2021 թվական | Գտնվում է Աղավնաձոր բնակավայր 1-ին փողոցում | Տ | |
| 5. | | | | Եղեռնին նվիրված խաչքար | 2015թ | Գտնվում է Սուրբ Մարիամ եկեղեցու բակում | Տ | Տեղադրված է համայնքի կողմից |
| 6. | | | | ական պատերազմին նվիրված հուշատախտակ և արձան | 1970-ական թվականներին | Գտնվում է Սուրբ Մարիամ եկեղեցու բակում | Տ | |
| 7 | | | | Հայրենական պատերազմին նվիրված հուշաղբյուր | 1960-ական թվականների վերջին | Գտնվում է բնակավայրի 6-րդ փողոցի սկզբնամասում | Տ | |
| 8 | | | | Հայրենական պատերազմին նվիրված հուշաղբյուր | 1960-ական թվականների վերջին | Գտնվում է բնակավայրի 3-րդ փողոցում | Տ | |
| 9 | | | | Սուրբ Աստվածածին եկեղեցի | 13-րդ դար | Գտնվում է Աղավնաձոր բնակավայրի Ուլգյուր հանդամասում | Տ | |
| 10 | | | | Խաչ | 2022 թվական | Գտնվում է Աղավնաձոր բնակավայրի ՈՒլգյուր լեռան ստորոտում | Տ | Տեղադրված է բարերար Նորիկ Հակոբջանյանի կողմից |
| 11 | | | | 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակի խաչքար | 2023թվական | Գտնվում է բնակավայրի Պարտիզակ հանդամասում | Տ | Զոհված զինծառայողների ծնողների և բարերարի կողմից |

## Չիվա գյուղ

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | Մատուռ | 1985թ. | Մ2 մայրուղու 92կմ հեռ. հարակից տարածքում | Հ | Կառուցվել է համագյուղացիների կողմից |
| 2. | | | | Հուշաղբյուր Վահան Սաղաթելյանի անվան | 1984թ. | Մշակույթի տան դիմաց | Տ | Կառուցվել է ընկերների կողմից |
| 3. | | | | Հուշաղբյուր Վազգեն Արտաշեսյանի անվան | 1983թ. | Չիվա բնակավայր 3-րդ փ. | Տ | Կառուցվել է ընկերների կողմից |
| 4. | | | | Կիսանդրի Տիգրան Ավետիսյանի | 2021թ. | Չիվա բնակավայրի կենտրոնական հատվածում | Տ | Կառուցվել է ընկերների կողմից |
| 5. | | | | Խաչքար-հուշաղբյուր Վարդան Կարապետյանի | 1993թ. | Չիվա բնակավայրի միջնակարգ դպրոց | Տ | Կառուցվել է ընկերների կողմից |

## Արփի գյուղ

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | Հուշաքար նվիրված 1941-1945թթ հայրենական մեծ պատերազմին | 1982 | Երևանյան խճուղի Մ2 մայրուղի | Տ | |
| 2. | | | | Վահիկ Լևոնյանի անվան հուշարձան նվիրված 1941-1945թթ Հայրենական մեծ պատերազմին | .1956 | Դպրոցում | Տ | Կառուցվել է Աղիբեգ Գրիգորյանի կողմից |
| 3. | | | | Հուշաքար խոյեր 2 հատ բերվել են Գնիշիկից 1990-ականներին | | Հանդիսությունների սրահին կից պուրակում | Տ | |
| 4. | | | | Հուշարձան կոթող նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին | 1990 | Հանդիսությունների սրահին կից պուրակում | Տ | |
| 5. | | | | Հուշարձան կոթող նվիրված Հայրենական մեծ պատերազմին | 1990 | Հանդիսությունների սրահին կից Պուրակում | Տ | |
| 6. | | | | Հուշարձան կոթող նվիրված արցախյան պատերազմին | 1995 | Հանդիսությունների սրահին կից պուրակում | Տ | |
| 7 | | | | Խաչքար նվիրված արցախյան քառօրյա պատերազմին | 2017 | Հանդիսությունների սրահին կից պուրակում | Տ | Կառուցվել է Մարատ Կարապետյանի կողմից |

| | | | | քառասունչորսօրյա պատերազմին | | սրահին կից պուրակում | | Կարապետյանի կողմից |
|---|---|---|---|---|---|---|---|---|

## Խաչիկ գյուղ

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Քարակոփի /Խոտակերած/ վանք | 5-րդ դար | Բնակավայրից հյուսիս-արևմուտք | Հ | |
| 1. | | | | Սուրբ Աստվածածին եկեղեցի | 1800 | Գյուղամիջյան հրապարակ | Հ | , |
| | | | | Հնզզարաթ /Հազարափրկիչ/ | 13-րդ դար | Հյուսիս- արևելք | Հ | |
| 2. | | | | Հայրենական մեծ պատերազմի հուշարձան | .1970 | Գյուղամիջյան հրապարակ | Տ | |
| | | | | Արցախյան առաջամարտի հուշարձան | 2005 | Գյուղամիջյան հրապարակ | Տ | |
| 3. | | | | Արցախյան պատերազմի 44 օրյա պատերազմի նվիրված | 2023 | Գյուղամիջյան հրապարակ | Տ | |

## Ռինդ գյուղ

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | | | | Հուշաքար նվիրված 1941-1945թթ հայրենական մեծ պատերազմին | 1983 | Փառքի պուրակ | Տ | |
| 2. | | | | Հուշարձան կոթող նվիրված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին | .2015 | Փառքի պուրակ | Տ | Կառուցողներ՝ Տիգրան Ասատրյան , Վարազդատ Ասատրյան , Արթուր Անտոնյան |
| 3. | | | | Հուշարձան կոթող նվիրված Արցախյան պատերազմին | 2015 | Փառքի պուրակ | Տ | Ռինդի գյուղապետարան |
| 4. | | | | Հուշարձան աղբյուր նվիրված ՀՀ անկախության 25 ամյակին | 2016 | Փառքի պուրակ | Տ | Ռինդի գյուղապետարան |
| 5. | | | | Սուրբ Մարիամ եկեղեցի | 2021 | 1-ին,2-րդ,3-րդ,4-րդ փողոցների խաչմերուկում | Տ | |
| 6. | | | | Խաչքար նվիրված 44 օրյա պատերազմի զոհերի հիշատակին | 2021 | Սուրբ Մարիամ եկեղեցու բակում | Տ | Կառուցվել է Վարդան Սարգսյանի կողմից |

## Արենի գյուղ

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Ամաղու գյուղատե-ղիից 1 կմ հվ-ամ | | |
| 2 | | | ԳՅՈՒՂԱՏԵՂԻ | 10-20 դդ. | գյուղից 8 կմ հվ, Գնի-շիկ գետի ձախ ափին, Մարդաղ լեռան լանջին | Տ | գյուղատեղի Ամաղու (Վերին Ամաղու) (2) |
| 3 | | | ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԱՐՓԱ» | 8-17 դդ. | գյուղի աե մասում, Արփա գետի ձախ ափին | Հ | 3: Սբ. Աստվա-ծածին եկեղեցին և շրջակա գերեզմանոցի մի մասը հանձնվել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին |
| | 3.1 | | Գերեզմանոց | 8-17 դդ. | Սբ. Աստվածածին եկեղեցու շուրջը | Հ | 3.3 |
| 4 | | | ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ | անտիկ | գյուղի ամ մասում | Հ | 4 |
| 5 | | | ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՍԱՐԳԻՍ | 13-17 դդ. | գյուղից 3 կմ ամ, բլրի վրա | Տ | 5 |
| 6 | | | ԽԱՉՔԱՐ | 1303 թ. | գյուղի հվ-ամ մասում, «Վարդապետի հողեր» վայրում, Գինու գործարանի դիմաց | Հ | 6 |
| 7 | | | ԽԱՉՔԱՐ | 14 դ. | գյուղի հվ-ամ մասում, «Վարդապետի հողեր» վայրում, Գինու գործարանի դիմաց | Հ | 7 |
| 8 | | | ԽԱՉՔԱՐ | 14 դ. | գյուղի հվ-ամ մասում, «Վարդապետի հողեր» վայրում, Գինու գործարանի դիմաց | Հ | 8 |
| 9 | | | ԿԱՄՈՒՐՋ | 13 դ. | գյուղի հս-աե մասում, Արփա գետի վրա, ՀԷԿ-ի մոտ | Հ | 9 |
| 10 | | | ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ | 1969 թ. | գյուղի կենտրոնում | Տ | 10 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Մ ՁՈՀՎԱԾՆԵՐԻՆ | | | | |
| 11 | | | ՔԱՐԱՆՁԱՎ «ՄԱԳ ԻԼԻ» | | գյուղից 3 կմ աե, «Ոսփի ձորում», Նորավանքի ձոր տանող ճանապար-հի 2-րդ կմ-ի մոտ | Տ | պետ. ցուցա-կում՝ Քարանձավ «Մագելանի» (11 |

## Ամաղու գյուղ

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՆՈՐԱՎԱՆՔ (ԱՄԱՂՈՒԻ ՆՈՐԱՎԱՆՔ) | 12-17 դդ. | գյուղից 3 կմ հվ-աե, Գնիշիկ գետի աջ ափին | Հ | 1 |
| | 1.1 | | Բնակելի և տնտեսական շինություններ | 11-14 դդ. | | Հ | 1.6 |
| | 1.2 | | Գավիթ Սբ. Կարապետ եկեղեցու | 13 դ. | | Հ | 1.3: Ենթակայությամբ ներկայացված է 39 հուշար-ձան (1.3.1-1.3.39) |
| | 1.3 | | Գերեզմանոց | 10-14 դդ. | | Հ | 1.5: Ենթակայությամբ ներկայացված է 5 հուշարձան (1.5.1-1.5.5) |
| | 1.4 | | Դամբարան Սմբատ իշխանի (եկեղեցի Սբ. Գրիգոր) | 1275 թ. | Սբ. Կարապետ եկեղեցու հս կողմում | Հ | 1.4: Ենթակայությամբ ներկայացված է 8 հուշարձան (1.4.1-1.4.8) |
| | 1.5 | | Եկեղեցի Սբ. Աստվածածին (Բուրթելաշեն) | 1339 թ. | | Հ | 1.1: Ենթակայությամբ ներկայացված է 6 հուշարձան (1.1.1-1.1.6) |
| | 1.6 | | Եկեղեցի Սբ. Կարապետ | 1216-1223 թթ. | համալիրի հս-ամ կողմում | Հ | 1.2: Ենթակայությամբ ներկայացված է 5 հուշարձան (1.2.1-1.2.5) |
| | 1.7 | | Իջևանատուն (հյուրատուն) | 1273-1290 թթ. | համալիրի պարսպից դուրս, Փոկաս հայրապետի մատուռից հս-ամ | Հ | 1.9: Ենթակայությամբ ներկայացված է 3 հուշարձան (1.9.1-1.9.3) |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | դդ. | աև | | |
| | 1.9 | | Մատուռ Փոկաս Հայրապետի | 11 դ. | պարսպից դուրս, համալիրի աև կողմում | Հ | 1.8 |
| | 1.10 | | Պարիսպ | 17-18 դդ. | | Հ | 1.10 |
| | | | | | | | |

Հուշարձանները կարող են օգտագործվել գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ:

Համայնքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գոտիների սահմաններում կառուցապատման ցանկացած աշխատանք իրականացնել միայն համապատասխան նախագծերի առկայության դեպքում:

3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

## IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Պահպաման ենթակա են 3.1 կետում նշվածները, ինչպես նաև համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող հետևյալ շենքերը և շինությունները.
1. Խմելու ջրի օրական կարգավորման ջրամբարները, ջրամատակարարման ցանցը,
2. Կոյուղաջրերի մաքրման կայանները՝ կոյուղու կոլեկտորների հետ միասին, ջրահեռացման ցանցը՝ դիտահորերի հետ միասին,
3. Համայնքի տարածքով անցնող ոռոգման հիմնական ջրանցքները, ոռոգման առուների ցանցը,
4. Էլեկտրահաղորդման ցանցի օբյեկտները՝ ենթակայաններ, հենասյուներ, հաղորդագծեր ևն,
5. Գազամատակարարման ցանցի օբյեկտները՝ բաշխիչ կայաններ, խողովակաշարեր ևն,
6. Հեռահաղորդակցման և կապի ցանցի օբյեկտները՝ վերգետնյա և ստորգետնյա մալուխներ, բջջային կապի կայաններ, աշտարակներ ևն,
7. Մայրուղողիների և ճանապարհների հետիոտնային անցումները՝ ստորգետնյա և կամրջային:
8. Հանրային այգիները,
9. Արվեստի դպրոցները,
10. Մարզադպրոցները,
11. Մանկապարտեզները:
12. Համայնքի փողոցների ցանցը՝ ճանապարհային նշանների և սարքավորումների հետ միասին,
13. Գերեզմանոցները՝ սանիտարապաշտպանիչ գոտու հետ միասին,
14. ՀՀ ՊՆ, ՆԳ, ԱԻՆ օյեկտները, պաշտպանական, քաղաքացիական պաշտպանության կառույցները, ապաստարանները, ազդանշանման համակարգերը ևն,
4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

## V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը՝ պայմանով, որ կատարվեն ճաշակով և մասնագիտական բարձր վարպետությամբ:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. շենքի մաշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն), իրականացնելիս հաշվի առնել քաղաքաշինական ձևավորված կամ նոր ձևավորվող միջավայրին հարազատ մնալու, չխաթարելու, այլ ընդհակառակը, բարելավելու, զարգացնելու անհրաժեշտությունը:

բ. հատուկ ուշադրություն դարձնել փողոցի կողմի ցանկապատի և մուտքի գեղարվեստական ձևավորմանը, բարեկարգել փողոցի հարակից հատվածը միասնական ոճով և նյութերով,

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները («հինգերորդ ճակատ»), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն իրականացնել, հաշվի առնելով համայնքի քաղաքաշինական միջավայրի ձևավորման վրա դրանց մեծ ազդեցությունը,

դ. խրախուսվում են շենքի ճակատների և փողոցի հարակից մասերի մաքրությունը, ամրությունը, արտաքին լուսավորությունը:

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները). խրախուսվում են բարձրորակ, հարատև, էկոլոգիապես մաքուր ու անվնաս շին. նյութերը:

բ. համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառները ծածկոցով,նստարաններով և լուսավորության ցանցով հագեցնել և ձևավորել գեղարվեստական ճաշակով բարձրորակ շին. նյութերով,

գ. հասարակական նշանակության շենքերում և տարածքներում ապահովել հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),

դ. հասարակական, ինչպես նաև մասնավոր տարածքներում խրախուսվում է ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն),

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատում ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր) հանդիսանում են մշտական հոգածության ոլորտներ,

բ. հետևողականորեն իրականացնել,ամբողջ համայնքի հատվածում, հանքերի փոշու և քամու դեմ պաշտպանական գոտու, ինչպես նաև գերեզմանոցների շուրջ սանիտարական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ):

## VI. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

1. Քաղաքաշինական գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների համար պարտադիր են քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը, որը ապահովում է հուսալիության, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշեր, ինչպես նաև նախագծման իրականացման ու շահագործման ընթացքում որակի ապահովման պայմաններ:

Ճարտարապետահատակագծային առաջադրանքը համայնքում տալիս է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Շինարարության թույլտվությունը տրվում է

կողմից: Շինարարության թույլտվություն չի պահանջվում շենքերի, շինությունների, ընթացիկ վերանորոգման, շենքերի հարդարման և տարածքների բարեկարգման աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը կամ չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

Քանդման թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

Քաղաքաշինական գործունեությունը իրականացվում է բացառապես հաստատված քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:

Ավարտված շինարարության փաստագրումը թույլատրվում է միմիայն շահագործման ակտը ձևակերպելուց հետո: Ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրում է համայնքի ղեկավարը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Օբյեկտների կառուցումը իրականացվում է ՀՀ քաղաքաշինության օրենքով՝ սահմանված կարգով նախագծերի ձեռքբերման, փորձաքննության անցկացման, շինարարության թույլտվության ստացումով:

Արգելվում է առանց համայնքի ղեկավարի որոշման և թույլտվության շենքերի պատշգամբների, ինչպես նաև վարձակալած ոչ բնակելի տարածքներում որևէ վերափոխումներ կատարելը,շենքի արտաքին տեսքը փոփոխելը:

Արգելվում է շենքերի բակերում որևէ տաղավար կամ ավտոտնակ տեղադրելիս կամ կառուցելիս ցանկապատումները, ծանր տրանսպորտային միջոցների կանգառումը:

Արգելվում է զազոններին կամ մայթերին կից հողատարածքները բանջարանոցի վերածելը, նախամուտքերը և սանդուղքավանդակները տնտեսական իրերով ծանրաբեռնելը, չնախատեսված տեղերում ընտանի կենդանիներ պահելը:

2. ԳՈՎԱԶԴՆԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

Բոլոր տեսակի արտաքին գովազդային նյութերի, ցուցափեղկերի, հայտարարությունների, ցուցատախտակների և այլ տեղեկատվական միջոցների տեղադրումը շենքերի, պարիսպների առանձին վահանակների, ստենդների և նման ճարտարապետական կառույցների վրա թույլատրվում է միայն համայնքի ղեկավարի որոշմամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Գովազդները պետք է լինեն «Գովազդի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ հավաստի, օրինական, պատշաճ պահպանելով արտաքին գովազդի տեղադրման համար թույլտվության բոլոր պայմանները:

Գովազդի տեղաբաշխման նկատմամբ հսկողությունը իրականացնում է համայնքապետարանը: Արգելվում է անբարեխիղճ, ոչ ՀՀ օրենքներին համապատասխանող գովազդի տեղադրումը:

Ժամանակավոր տաղավարների տեղադրումը թույլատրվում է ըստ կառավարության կողմից սահմանված կարգի, համայնքի ղեկավարի որոշմամբ, հող.օգտագործման և շինարարության բաժնի մասնագետի ներկայությամբ՝ համաձայն առևտրի և սպասարկման համայնքային կանոնների:

վճարներ:

Համայնքի ղեկավարը սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը: Համայնքի ավագանու որոշմամբ անվանվում և վերանվանվում են համայնքային նշանակության փողոցները, հրապարակները, զբոսայգիները և այլն:

Արգելվում է ինքնուրույն կերպով հանել, տեղադրել և վերատեղադրել փողոցների անվանումների և համարակալման ցուցանակները:

VII. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կառուցապատողները պարտավոր են կառուցապատումն իրականացնել օրենքով սահմանված կարգով ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան շինարարության թույլտվության հիման վրա առանց էական շեղումների:

Ապահովել քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննությունը ՀՀ կառավարության սահմանված կարգով:

Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններից ստանալ քաղաքաշինական օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանները:

Շինարարական աշխատանքներ կատարելիս շինհրապարակները պետք է ցանկապատվեն՝ ժամանակավորապես և տեսանելի տեղում փակցվեն համապատասխան ցուցանակներ ունենան համապատասխան կահավորում: Շինարարական աղբն ու հողը պետք է դուրս բերվեն կուտակվելու ընթացքում: Շինարարական կամ վերանորոգման աշխատանքներ կատարելիս ձեռնարկում է միջոցառումներ, որպեսզի չկեղտոտվեն շինհրապարակին հարող տարածքները, չաղտոտվի օդը:

Հողային աշխատանքների կատարումը (հրապարակներում, մայթերում, անցումներում, բակերում, սիզամարգերում, այգիներում, պուրակներում և այլ տեղերում) ստորգետնյա ինժեներական ցանցերի կառուցման և վերանորոգման ժամանակ, կապված վերգետնյա կառույցների հետ, թույլատրվում է միայն ըստ համաձայնեցված նախագծերի և համայնքի ղեկավարի թույլտվության հիման վրա:

Ճանապարհածածկույթի կամ հողածածկի քանդման հետ կապված վթարային աշխատանքները թույլատրվում են ընդունված վթարային հեռախոսագրի առկայությամբ այն կազմակերպությունների կողմից, որոնք տնօրինում են հաշվեկշռում գտնվող ինժեներական ցանցերը:

Ստորգետնյա ինժեներական ցանցերի վթարների վերացումը սկսվում է անմիջապես հեռախոսագրի հաղորդումից հետո, այդ մասին տեղյակ պահելով ավտովերահսկողությանը և կոմունալ սպասարկման ձեռնարկությանը:

Վթարային աշխատանքների տեղը պետք է շրջափակվի, կահավորվի ճանապարհային նշաններով և լուսավորվի մութն ընկնելիս: Վթարը վերացնող կազմակերպությունը պարտավոր է նաև անհապաղ (նախնական) վերականգնի քանդված հատվածը հողով՝ շերտային խտացումով և համապատասխան չափի խճանյութով, ինչպես նաև մաքրի ավելորդ հողից և շինարարական մնացորդներից, գոյացած աղբից:

կամ ճանապարհային հսկողություն իրականացնող ծառայությունների ներկայացուցիչներին ակտով, ճանապարհի ծածկույթը ամբողջովին վերականգնելուց հետո:

Կտրականապես արգելվում է ստորգետնյա ինժեներական ցանցերի կառուցման կամ պլանային վերանորոգման աշխատանքների կատարումը վթարային աշխատնքների պատրվակով:

Արգելվում է ինքնակամ պեղումների, հորատման, սյուների ու ձողերի տեղադրման, հողածածկույթի մշակման, հրապարակների հողահավասարեցման, փլատակների և քանդման ենթակա

կառույցների տակի հողածածկույթների մշակումը առանց ստորգետնյա ինժեներական ցանցերի (էլեկտրականություն, գազ, ջուր և այլն) անջատման:

Մագիստրալային փողոցների հատման հիմնական մեթոդը հանդիսանում է, որպես կանոն, փակ՝ ստորգետնյա ձևը, որը լուծվում է նախագծային կազմակերպությունների կողմից, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ընթացքում և համաձայնեցվում ընդունված կարգով:

Արգելվում է որևէ տեսակի հողային աշխատանքների կատարումը նոր ճանապարհածածկույթի (ասֆալտի) կատարումից հետո փողոցներում, հրապարակներում:

Բացառություններ թույլատրվում են միայն վթարների դեպքում:

Շինարարական, վերանորոգման աշխատանքների ժամանակ ցանկապատման, երթևեկության կարգավորման, ճանապարհային նշաններով կահավորման և գիշերային լուսավորման պատասխանատվությունը կրում է քաղաքաշինության գործունեության սուբյեկտը: Շինարարական կազմակերպությունը պարտավոր է մագիստրալային և հասարակական տրանսպորտի երթևեկության, փողոցների շարժման ուղղությունների փոփոխության մասին պետավտոտեսչության միջոցով ապահովել բնակիչների անվտանգությունը: Աշխատանքների ավարտից հետո ժամանակավոր կարգավորման նշանները վերացվել են:

Փողոցների երթևեկելի մասի մասնակի վերանորոգումների ժամանակ պետք է ապահովվի տրանսպորտի անխափան երթևեկությունը, իսկ միջանցիկ անցման փակելիս ապահովվի հրդեհային պաշտպանության, շտապ օգնության, հատուկ սանիտարական մաքրման, էլեկտրական և գազի ծառայության մեքենաների երթևեկության պայմանները: Անցումների փակման վերաբերյալ տեղյակ է պահվում շտապ օգնության, հակահրդեհային ծառայություններին և պետավտոտեսչությանը:

Ժամանակավոր շրջանցումային ճանապարհները, հետիոտնային արահետները, կամուրջները, բակերի և շենքերի մուտքերի մերձեցման ուղիների վերանորոգման աշխատանքները ավարտելիս վերացվում են կառուցապատման աշխատանքներն իրականացնող կազմակերպությունների կողմից:

Ճանապարհների լրիվ փակման և երթևեկության դադարեցման որոշումը ընդունում է համայնքի ղեկավարը՝ համաձայնեցնելով պետավտոտեսչության հետ:

Երթևեկելի մասի և մայթերի շինարարության վերանորոգման աշխատանքների ժամանակ ստորգետնյա ցանցերի տնօրինողները պարտավոր են իրենց ուժերով, վերանորոգում կատարողների պահանջով, կատարել վերատեղադրող ցանցերի անջատումը: Բարեկարգման նպատակով ստորգետնյա ինժեներական

վերանորոգումը իրականացնող պատվիրատուի կազմակերպության պատվերով ու նրա միջոցներով: Նախագծից էական շեղումներ ունեցող ինժեներական ցանցերի տնօրինողները վերատեղադրման աշխատանքները կատարում են իրենք, սեփական միջոցներով:

Քաղաքացիների կողմից ինժեներական կառուցումների միացումը, որպես կանոն իրականացվում է բարեկարգման աշխատանքների ժամանակ:

Թրթուրավոր տրակտորների և այլ մեքենաների շարժումը վերանորոգված փողոցներով արգելվում է: Նման տրանսպորտի տեղափոխությունը համայնքի տարածքում կազմակերպվում է միջդաշտային ճանապարհներով և երկրորդային նշանակության փողոցներով:

Փողոցները, մայթերը, ասֆալտապատված և բարեկարգված այլ տարածությունները ինքնակամ քանդողները անհապաղ դադարեցնում են քանդման աշխատանքները, իրենց միջոցներով վերականգնում քանդված տարածքի նախկին տեսքը և օրենքով սահմանված կարգով կրում պատասխանատվություն:

## VIII. ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՎԱԾՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՈԳՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Ստորգետնյա ինժեներական ցանցերի հետ առնչվող բոլոր տեսակի շինարարական և վերանորոգման աշխատանքները թույլատրվում են միայն այն նախագծով և սխեմաներով (տեխնիկական պայման), որոնք համաձայնեցված են համայնքապետարանի և ներքոհիշյալ կազմակերպությունների հետ:

- Քաղաքային էլեկտրացանց
- կապի ձեռնարկություն
- Գազի շահագործման միջշրջանային վարչություն
- Ճանշին վերանորոգման վարչություն
- Կոմունալ սպասարկման ձեռնարկություն
- Ջրմուղ-կոյուղու ձեռնարկություն
- Պետավտոտեսչություն

Առանձին դեպքերում, երբ ինժեներական ստորգետնյա կառույցները շոշափում են այն կազմկերպությունների շահերը (զինվորական, հատուկ շինարարական, երկաթգիծ և այլն) նախագծերը պետք է նույնպես համաձայնեցվեն նրանց հետ:

2. Արգելվում է հաստատված ինժեներական ցանցերի ծրագծերի (տրասա) փոխումը առանց համայնքի ղեկավարի և շահագրգռված կազմակերպությունների հետ համաձայնեցման: Ծրագրերի տարաձայնությունների վերաբերյալ վերջնական որոշում է ընդունվում համայնքապետարանի համապատասխան հարցերի հանձնաժողովի կողմից:

յուրաքանչյուր նախագծով կատարվող ինժեներական ցանցերի տեղակայման վերակառուցման աշխատանքները, որոնք կապված են հողածածկի, ասֆալտի և բարեկարգ այլ տարածությունների հետ աշխատանքները սկսելուց առաջ պետք է ունենալ համայնքապետարանի թույլտվությունը:

Առանց համայնքապետարանի հետ համաձայնեցնելու, հողային աշխատանքները կարող են կատարվել սեփական տարածքում կամ օտարման գոտիներում, դրանց ինժեներական կառուցվածքների տնօրինող հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների պատասխանատվությամբ, եթե դրանք չեն պահանջում 8-1 կետում նշված ծառայությունների համաձայնությունը, չեն խախտում որևէ մեկի իրավունքները:

Անհատ քաղաքացիներին առանձին վթարների դեպքում թույլատվությունը տրվում է համայնքապետարանի կողմից, 8-1կետում նշված կազմակերպությունների համաձայնության և առաջադրած տեխնիկական պայմանի հիման վրա:

Թույլտվությունները տրվում են պատվիրատու կազմակերպություններին, անհատ քաղաքացիներին, անմիջապես աշխատանք կատարողներին, որը ուժի մեջ է վերջինների համար նշված տեղամասի, աշխատանքի ձևի, ծավալի և ժամանակաշրջանի նշումների դեպքում:

Կարմիր գծերի սահմաններում (փողոցների և թաղամասերի անցումները) ստորգետնյա ինժեներական ցանցերի շինարարության կամ վերանորոգման աշխատանքների կամ վերանորոգման աշխատանքների թույլտվություններն ստանալու համար գյուղապետարանին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝

Ճանապարհածածկույթի, ինժեներական ցանցերի տեղակայման, վերանորոգման թերությունների ակտ, նշելով ճանապարհածածկույթի և ինժեներական կառույցների առկա վիճակը և վերանորոգման չափերն ու ծավալները:

Ծրագրի նախագիծը, համաձայնեցված ճարտարապետական բաժնի և 8-1 կետում նշված շահագրգռված կազմակերպությունների հետ:

Կապալառու կազմակերպության կնիքով համաձայնեցված պլան:

Կապալային կազմակերպության հետ պայմանագիր չունեցող կազմակերպությունները բարեկարգման կառույցների վերանորոգման համար պետք է ներկայացնեն երաշխավորագիր-նամակ, ստորագրված պետի և հաշվապահի կողմից:

Աշխատանքի կատարման պատվերները նախօրոք քննարկվում են քաղաքաշինության հանձնաժողովի կողմից, և նրա որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որտեղ նշվում են նաև աշխատանքների կատարման ժամկետները:

Աշխատանքների կատարման թույլտվությունները տրվում են սահմանված վճարները մուծելուց հետո:

Ստորգետնյա և վերգետնյա ինժեներական ցանցերի տեղակայման և վերանորոգման, ինչպես նաև ասֆալտի ծածկի և բարեկարգման այլ էլեմենտների վերականգման աշխատանքները պետք է կատարեն

ճարտարապետական բաժնի կողմից տրվող տեղակայման արձանագրությունը կարմիր գծերի և օբյեկտների կապումով, ինժեներական կապերի տեխ պայմանի հետ միասին:

Աշխատանքների կատարման ընթացքում պատասխանատու աշխատողի ներկայությունը պարտադիր է, որն իր հետ պետք է ունենա թույլտվություն ու աշխատանքի կատարման նախագիծ:

Աշխատանքներն սկսելու նախօրյակին պետք է տեղյակ պահել ինժեներական ցանցեր ունեցող շահագրգռված կազմակերպություններին, ցանցեր ունեցող կազմակերպություններին՝ ցանցերի տեղը համատեղ ճշտելու, անհամապատասխանությունները պարզելու համար:

Աշխատանքների կատարման տարածքում գոյություն ունեցող ստորգետնյա ինժեներական ցանցերի փչացումից ապահովելու պատասխանատուն է այն անձը, որը ղեկավարում է աշխատանքների կատարումը: Նրանք պարտավոր են կատարելու բոլոր տեխնիկական պահանջները և կազմակերպությունների պայմանները:

Փողոցում, հրապարակներում և մյուս բարեկարգված տարածություններում ստորգետնյա ինժեներական ցանցերի խրամուղիների փորման և լցման, վերգետնյա կառույցների ժամանակ պետք է ապահովվեն հետևյալ պայմանների կատարումը:

Խրամուղու լայնությունները պետք է լինի նվազագույնը, ասֆալտի քանդումը պետք է կատարվի կտրման հատուկ մեքենաներով: Խրամուղիների ու փոսորակների պատերը համաձայն նախագծերի պետք է ամրացվեն, նրանց լցման համար պետք է օգտագործվի մաքուր հող 20սմ-ից ոչ ավելի շերտով, որը պետք է խտացվի համաձայն շինարարական նորմաների:

Ջրահոսների և հեղուկների հեռացումը խրամուղիներից և փոսորակներից պետք է կատարվի միայն դեպի անձրևատարների մեջ: Արգելվում է դրանց լցնելը երթևեկելի մաս կամ մայթի վրա:

Շինարարական, վերակառուցման կամ վերանորոգման աշխատանքների ավարտից հետո պատասխանատու կատարողը պետք է :

24 ժամվա ընթացքում մաքրի վերանորոգումից հետո մնացած շինարարական մնացորդները:

Կանչել կոմունալ ծառայության կամ փողոցները, մայթերը տարածությունները տնօրինող կազմակերպություններին, ապատասխանատու անձերին, ակտով հանձնել վերանորոգված բարեկարգման կառուցվածքները և ասֆալտածածկույթը:

Քանդված մայթերի վերանորոգումը անկախ ծածկույթի ձևերից պետք է կատարվի ամբողջ գոյություն ունեցող լայնությամբ:

Փողոցի երթևեկելի մասի ասֆալտաբետոնային ծածկը վերանորոգվում է նախկին վիճակով, մինչև քանդումը կազմված հատուկ ակտի պահանջներից, խճածածկի դեպքում խրամուղու կրկնակի լայնության չափով:

- Ասֆալտոբետոնյա ծածկույթը լրացվում է մինչև եզրաքարերը, եթե խրամուղու և նրա միջև տարածությունը փոքր է 2մ-ից:

երաշխավորված ժամկետում:

-Ավազապատ և հողածածկ ունեցող տարածությունների վերականգնումը կատարվում է քանդման չափով, որը պետք է հաստատվի երկկողմ ակտավորումով, մինչև աշխատանքների սկսելը:

- Կանաչ տարածությունները վերականգնվում են համաձայն կոմունալ ձեռնարկությունների և կանաչապատման ծառայության պայմանների:

-Վերգետնյա կառույցների (ցանկապատներ, հենասյուներ, ճանապարհային նշաններ և այլն) վերանորոգվում են շինարարության վերանորոգում կատարող կազմակերպությունների կամ անհատների կողմից:

-Ճանապարհածածկույթի վերանորոգման ժամկետները սահմանվում են՝ ելնելով փողոցների նշանակության և աշխատանքների ծավալից: Մագիստրալային և ինտենսիվ շարժման փողոցներում՝ 24, իսկ մյուսներում՝ 48 ժամվա ընթացքում:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս պետք է հաշվի առնել սույն կետի պահանջները:

- Վերականգնված ճանապարհային ծածկույթներն ըստ պատկանելության հանձնվում են շահագործող կազմակերպություններին՝ կատարողական գծագրերի հետ միասին:

## IX. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Քաղաքաշինական գործունեության վերահսկողությունն իրականացնում է քաղաքաշինական պետական տեսչության Արմավիրի տարածքային բաժինը, Արմավիրի մարզպետը, որը միաժամանակ համակարգում է համայնքի ղեկավարների գործունեությունը քաղաքաշինության բնագավառում:

Արենի համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքների, քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելումը, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Քաղաքաշինական գործունեության հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 090-Ն

### ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ՊԱՇՏՈՆԻ ԵՆԹԱԽՄԲԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ, 7-րդ մասերով և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջներով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի կիրառման կարգը և չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

*Հավելված*
Արենի համայնքի ավագանու
2025թ. հուլիսի -ի թիվ 090-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

***Վայոց Ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման չափը***

1. Սույն կարգով սահմանվում է Վայոց Ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճանի համար աշխատանքի վարձատրության պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և դրա չափը:
2. Հավելավճարը սահմանվում է այն համայնքային ծառայողների համար, ովքեր «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճաններ և կիրառվում է ավելի բարձր դասային աստիճանը շնորհելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:
3. Արենիի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում 5%-ի (հինգ տոկոսի) չափով՝ ավելի բարձր դասային աստիճանի համար, շնորհված նաև այլ համայնքների աշխատակազմերում:
4. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **Գ.ՍԻՄՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 091-Լ

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ N47-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով`

1. Արենի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 17-ի N 47-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ` համաձայն հավելվածի:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔՆԱՐԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

06914384

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 092-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը, ՀՀ կառավարության 17.06.2021 թվականի թիվ 987-Ն որոշման հավելվածի 1-ին մասի 4-րդ, 9-րդ և 12-րդ կետերը, Արենի համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.13713 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-037-0124-0016, հողատեսքը՝ արոտ) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ կառուցված բնակելի տունը օրինականացնելու նպատակով:

2. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող Խաչիկ Հակոբի Թաղևոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0,15հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-036-0112-0036, հողատեսքը՝ վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Վրեժ Ավետիսի Նազարյանին և Հայարփի Սմբատի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող 0,15597 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-008-0176-0016, հողատեսքը՝ այլ ) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հողերի կատեգորիա ՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՅՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՅՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 093-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՄԻԱՖԱԶ ՀՈՍԱՆՔԻ ԱԲՈՆԵՄԵՆՏԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐԵՆԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Արենի համայնքի Արենի բնակավայրի ենթակայության տակ գտնվող միաֆազ հոսանքի աբոնեմենտը ժամանակավոր օգտագործելու նպատակով հատկացնել Արենիի դպրոցի շինարարական աշխատանքներ իրականացնող ընկերությանը:

2. Ծախսած էլեկտրաէներգիայի արժեքը ենթակա է վճարման Արենիի համայնքապետարանի 900355105066 հաշվեհամարին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 094-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15 ՄԱՐՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 020-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի հանրապետության «Հողային օրենսգրքի» 26-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Արենի համայնքի ավագանու 15մարտի 2023 թվականի «Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող, գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխելուն համաձայնություն տալու մասին» թիվ 020-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ.

Որոշման 3-րդև 4-րդ կետերի մեջ «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական» և «արդյունաբերական օբյեկտների» բառերը համապատասխանաբար փոխարինել «ջրային», «ջրային» բառերով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 095-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 14.02.2023 ԹՎԱԿԱՆԻ՝ «ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 -2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 008-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով՝,համայնքի ավագանին որոշում է՝

Արենի համայնքի ավագանու 14.02.2023 թվականի «Արենի Համայնքի 2023-2027թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 008-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 096-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11.02.2025 ԹՎԱԿԱՆԻ՝ «ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ (ՏԱՊ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 014-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Արենի համայնքի ավագանու 11.02.2025 թվականի «Արենի համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ) հաստատելու մասին» թիվ 014-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -8　　　Դեմ -0　　　Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**　　　**ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 097-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն սույն որոշման հավելված 1-ով ներկայացված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը լիցենզավորված կազմակերպության կողմից գնահատելու և աճուրդ-վաճառքով օտարելուն:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՔԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**Հավելված**

Արենի համայնքի ավագանու 16.07.2025թ.
թիվ 097-Ա որոշման

| Հ/Հ | Գտնվելու վայրը ; հասցեն | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Ծածկագիրը | Մակերեսը (հա) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Արփի | գյուղատնտեսական | այլ հողատեսք | 10-012-1373-0003 | 0.12831 |
| 2 | Արփի | գյուղատնտեսական | խաղող | 10-012-0109-0035 | 1.57524 |
| 3 | Արենի | գյուղատնտեսական | այլ հողատեսք | 10-008-0261-0002 | 0.08651 |
| 4 | Արենի | գյուղատնտեսական | այլ հողատեսք | 10-008-0261-0003 | 0.11278 |
| 5 | Արենի | գյուղատնտեսական | այլ հողատեսք | 10-008-0184- | 0.033 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 098-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 92-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Արենի համայնքի ղեկավարի բյուջեի կատարման 2025 թվականի երկրորդ եռամսյակի հաշվետվությունը ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված Արենի համայնքի ավագանու
16.07.2025թ.-ի թիվ 098-Ա որոշման

2025թ երկրորդ եռամսյակ

Եկամտային մաս.                                                  հազար դրամ

| Եկամտատեսակ | Նախատեսված | Կատարողական | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Անշարժ գույքի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 12785,0 | 14951,9 | 116,9 |
| Հողի վարձավճար համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 20250,1 | 22473,5 | 111,0 |
| Գույքահարկ | 18961,0 | 28271,6 | 149,1 |
| Տեղական տուրքեր | 2658,0 | 11395,0 | 428,7 |
| Գույքի վարձակալությունից եկամուտներ | 618,0 | 651,0 | 105,3 |
| Աղբահանության, խմելու ջրի և ոռոգման ջրի վճարներ | 9170,0 | 7596,1 | 82,8 |
| Մանկապարտեզի ծնողական վճարներ | 10295,0 | 4956,7 | 48,1 |
| Արտադպրոցական դաստիարակություն | 2200,0 | 2240,0 | 101,8 |
| **Այլ եկամուտներ**/օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 2100,0 | 9667,4 | 460,4 |
| **Ընդամենը սեփական եկամուտներ** | **79037,1** | **102203,1** | **129,3** |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 239422,6 | 239422,6 | 100,0 |
| Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ/սուբվենցիաներ/ | 190,2 | 302,7 | 159,1 |
| Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից /սուբվենցիաներ/ | 34725,0 | 34725,6 | 100,0 |
| **Ընդամենը եկամուտներ** | **353374,9** | **376654,0** | **106,6** |
| Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | 3908,9 | |
| ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ /Հողի օտարումից/ՄՈՒՏՔԵՐ | 50000,0 | 41883,3 | **83,8** |

| Ծախսային մաս | Նախատեսված | Կատարողական | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 93000,0 | 72861,8 | 78,3 |
| Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | 1000,0 | 610,6 | 61,1 |
| Էներգետիկ ծառայություններ | 27000,0 | 26669,4 | 98,8 |
| Կապի ծառայություններ | 480,0 | 477,3 | 99,4 |
| Ապահովագրական ծախսեր | 200,0 | 91,0 | 45,5 |
| Պայմանագրային ծառայությունների և ապրանքների ձեռք բերում | 17000,0 | 15024,7 | 88,4 |
| Դրամաշնորհներ | 100000,0 | 95791,1 | 95,8 |
| Սուբսիդիաներ | 68000,0 | 67255,1 | 98,9 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 5000,0 | 2016,0 | 40,3 |
| Այլ ծախսեր | 3800 | 3642,6 | 95,9 |
| Շենքների և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն | 70000,0 | 64163,2 | 91,7 |
| Նախագծահետազոտական ծախսեր | 12000,0 | 11475,0 | 95,6 |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 7500,0 | 7276,5 | 97,0 |
| **Ընդամենը** | **404980,0** | **367354,2** | **90,7** |

ՄԻԱՎՈՐՅԱԼ ԵՎՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 099-Ն

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.01.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 002-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով Արենի համայնքի ղեկավարի առաջարկությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է`

Հաստատել Արենի համայնքի ավագանու 15-ը հունվարի 2025 թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2025 թվականի տարեկան բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները և վերաբաշխումները`

1. Կառավարման մարմնի պահպանում 01 բաժնի 01 խմբի 01 դասի 4221 /ներքին գործուղումներ/ հոդվածից պակասեցնել 1 000 000 ՀՀ դրամ և ուղղել նույն ոլորտի 4823/պարտադիր վճարներ/ հոդվածին:

2. Արենի համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժնի 01 խմբի 02 դասի գործառնական դասակարգման 4891/պահուստային միջոցներ/հոդվածից պակասեցնել 7 800 000 ՀՀ դրամ և ուղղել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06` խմբի 01 դասի 4621/ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին/ հոդվածին:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐՁՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 100-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

2025թվականի օգոստոսի 4-ից 15-ը ներառյալ Արենի համայնքի մանկապարտեզներին տրամադրել արձակուրդ՝ ուսումնական տարվան նախապատրաստվելու, սանիտարահիգիենիկ միջոցառումներ իրականացնելու և աշխատակիցների հասանելիք արձակուրդները տրամադրելու նպատակով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 101-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, «ՄԻԿԱՐ 7» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 17.06.2021թվականի թիվ 987-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետը,Արենի համայնքի ավագանին որոշում է.

Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, «ՄԻԿԱՐ 7» ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող 1,43648 հա գյուղատնտեսական նշանակության (ծածկագիրը՝ 10-025-0101-0452, հողատեսքը՝ վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել ջրային հողերի կատեգորիա՝ ջրային գործառնական նշանակության՝ գեոմեմբրանով 15000 խմ ծավալով ջրավազան կառուցելու նպատակով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՅՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 102-Ա

### ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ և ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ Ի ՍԿԶԲԱՆԵ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ 7 800.000 ՀՀ ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով ՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն Արենիի համայնքապետարանի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համագործակցությամբ իրականացվող «Դիմակայություն ի սկզբանե» ծրագրի շրջանակներում Արենի համայնքի կարիքների համար շարժական բեմ-բեռնատարի ձեռքբերման նպատակով ՄԱԿ-ի զարգացման ծրագրին որպես համաֆինանսավորում լրացուցիչ 7 800.000 ՀՀ դրամ փոխանցելուն:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 103-Ա

### ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՎՐԱ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՇՎԻՉ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԸ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Գնումների մասին« Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով հայտարարված գնման ընթացակարգը չկայացած համարվելու մասին հայտարարությունները, Արենի համայնքի ավագանին որոշում է.

1. Հրատապության հիմքով պայմանավորված՝ տալ համաձայնություն Արենի համայնքի թվով 19 ջրաղբյուրների վրա էլեկտրոնային հաշվիչների տեղադրման և էլեկտրոնային միասնական հարթակին միացնելու աշխատանքները իրականացնել մեկ անձից գնման ընթացակարգով:

2. Անհրաժեշտ պարագաների, տեղադրման աշխատանքների և էլեկտրոնային հարթակին միացնելու աշխատանքների համար սահմանել առավելագույն արժեք՝ 240 000 ՀՀ դրամ՝ մեկ հաշվիչի հաշվարկով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՁԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԷ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՌՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 104-Ա

### ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ՝ GIZ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՏԶՀ) ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՒՀ-ԵՐՈՒՄ«ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ ԲԱՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 4-րդ կետով և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ կետով՝ Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն Գերմանական միջազգային համագործակցության ընկերության՝ GIZ--ի կողմից իրականացվող Տեղական զարգացման հիմնադրամի (ՏԶՀ) շրջանակներում Արենի համայնքի Խաչիկ բնակավայրում ոռոգման ջրի ներքին ցանցի կառուցում եվ Արենի համայնքի ՆՈՒՀ-երում «Ներառական կրթության ապահովում» ծրագրերի իրականացման նպատակով արտաբյուջետային հաշիվներ բացելուն:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ